# Sigillum Dei Vivi

## Կենդանի Աստծո Կնիքը

Այս յուրահատուկ աղոթքը մի Ընծա է
Հայր Աստծո կողմից՝ տրված
մարգարե Մարիա Աստվածային
Գթասրտությանը Աստծո բոլոր
զավակների պաշտպանության համար




Բոլոր նրանց, ովքեր ընդունեն այս
Կնիքը, կտրվի պաշտպանություն իրենց
և իրենց ընտանիքի յուրաքանչյուր
անդամի համար Քրիստոսի Երկրորդ
Գալուստին նախորդող
ժամանակահատվածի ընթացքում

Բարձրացեք հիմա և ընդունեք Իմ Կնիքը՝ Կենդանի Աստծո Կնիքը:Ասացեք այս խաչակրաց արշավանքի աղոթքը (33) Իմ Կնիքը ճանաչելու և այն սիրով, ուրախությամբ ու երախտագիտությամբ ընդունելու համար:

**Ով Աստված իմ, Իմ սիրող Հայր, ես սիրով և երախտագիտությամբ ընդունում եմ Պաշտպանության Քո Աստվածային Կնիքը: Քո Աստվածայնությունը ներառում է իմ մարմինն ու հոգին հավերժությունը: Ես խոնարհվում եմ խոնարհ շնորհակալությամբ և առաջարկում Քեզ՝ իմ սիրելի Հայր, իմ խորը սերն ու հավատարմությունը: Ես խնդրում եմ Քեզ պաշտպանել ինձ և իմ սիրելիներին այդ հատուկ Կնիքով և ես իմ կյանքն եմ նվիրում Քո ծառայությանն ընդմիշտ: Ես սիրում եմ Քեզ սիրելի Հայր: Ես սփոփում եմ Քեզ այս ժամանակներում սիրելի Հայր: Ես առաջարկում եմ Քեզ Քո սիրելի Որդու Մարմինը, Արյունը, Հոգին և Աստվածայնությունը աշխարհի մեղքերի քավության և Քո բոլոր զավակների փրկության համար: Ամեն:**

Գնացեք, զավակներս, և մի վախեցեք: Վստահեք Ինձ՝ ձեր սիրող Հորը, ով սիրով ստեղծեց ձեզնից յուրաքանչյուրին: Ես ճանաչում եմ յուրաքանչյուր հոգու, ձեր յուրաքանչյուր մասը ծանոթ է Ինձ: Ձեզնից ոչ մեկն ավելի քիչ սիրված չէ մյուսից: Այդ պատճառով Ես չեմ ցանկանում կորցնել ոչ մի հոգու: Ոչ մի հոգու: Խնդրում եմ շարունակեք աղոթել Իմ Աստվածային Գթասրտության աղոթքն ամեն օր: Մի օր դուք կհասկանաք, թե ինչու է այս մաքրագործումն անհրաժեշտ:

Ձեր սիրող Երկնավոր Հայր

Ամենաբարձրյալ Աստված